

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՊԱՂԱԿ ԳԱՎԱՌԻ ԹՐՔԱՆՈՍ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐԸ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կուր գետի ձախափնյա շրջանների տարածքում պատմաճարտարապետական հուշարձաններով հարուստ են հայկական գրեթե բոլոր հին բնակավայրերը: Դրանցում որոշակի հետաքրքրություն են ներկայացնում թրքախոս-քրիստոնյա հայերով բնակեցված մի քանի գյուղեր՝ տեղաբաշխված երկրամասի կենտրոնական մասում, Կապադակ գավառի տարածքում: Այդօրինակ նշանավոր ու պատմաճարտարապետական հուշարձաններով առավել հարուստ գյուղերից է Սուլթան-Նուխին (այժմ՝ Ադրբեջանական ՍՍՀ, Կուտկաշենի շրջան): Այն գտնվում է գավառի կենտրոնական մասում, բաժանված է երկու թաղամասերի՝ արևելյան և արևմտյան: Հայտնի է, որ 1868 թ. Սուլթան-Նուխին ուներ 50 տուն հայ բնակչություն¹: 1874 թ. գյուղն ուներ 746 հայ բնակիչ²: 1886 թ. գյուղում բնակչության թիվը զգալի աճել էր ու կազմում էր 1367 մարդ³: Մոտավորապես, 1890 թ. Մ. Բարխուտարյանցի այցելության ժամանակ, Սուլթան-Նուխին ուներ 152 տուն՝ 1019 բնակիչ⁴: Նկատվում է, որ մինչև XX դ. սկզբները գյուղի բնակչությունը շարունակաբար փոքր-ինչ նվազել էր: 1908 թ. այն ուներ 952 հայ բնակիչ⁵, իսկ արդեն 1914 թ. գյուղում բնակվում էին 1110 հայ⁶: Սուլթան-Նուխին մեծ կորուստներ է կրել 1918-1920 թթ.⁷ ենթարկվելով մուսավաթականների և երկրամաս ներխուժած օսմանցիների կազմակերպած կոտորածներին: Հայերը (25 տուն), 1985 թվականին գյուղի բնակչության մի փոքր մասն էին կազմում: Բնակվում են արևմտյան թաղամասում: Նրանցից միայն 5-6 ընտանիք չի մոռացել մայրենին, սակայն ազգային դպրոցի բացակայության պայմաններում նրանք ևս գտնվում են այն կորցնելու ճանապարհին: Դեռևս XIX դ. վերջին Մ. Բարխուտարյանցը նշել է՝ «...բնակիչք բնիկ՝ Ուտյաց ցեղից, բայց խոսում են թուրքերեն»⁸: Ասենք, որ գավառի նիժ և Վարդաշեն գյուղերում իրոք բնակվում են ուտիացեղ հայեր⁹, բայց Սուլթան-Նուխիում, ինչպես ցույց տվեցին արխիվային փաստաթղթերի հետազոտությունն ու տեղում կատարված ուսումնասիրությունները, բնակվում են XVII դ. կեսերից թրքախոս դարձած հայեր, որոնք ոչ մի առնչություն չունեն ուտիացեղ հայերի հետ: Իրենք բնակիչները, շատ լավ են տարբերում հարևան գյուղի ուտիախոս կամ ուտիացեղ հայերին իրենցից: Հարցի պարզաբանմանն օգնում է նաև թրքախոս հայերի գյուղերում պահպանված գերեզմանոցների տա-

1 Հայաստանի պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀԳԿԱ), ֆ. 56, ց. 1, գ. 5070, թ. 1:

2 «Кавказский Календарь на 1885 г.», Тифлис, 1884, с. 216.

3 «Кавказский Календарь на 1894 г.», Тифлис, 1893, с. 166.

4 Մ. Բարխուտարյանց, Աղվանից երկիր և դրացիք, Քիֆուս, 1893, էջ 242:

5 «Кавказский Календарь на 1910 г.», Тифлис, 1909, с. 367.


6 «Кавказский Календарь на 1915 г.», Тифлис, 1914, с. 183.

7 Մ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 241:

8 Այն, որ ուտիացեղ հայեր բացի Նիժ և Վարդաշեն գյուղերից այլ տեղերում չեն բնակվել, վկայվում է իրենց իսկ՝ այդ գյուղերի բնակիչների ձեռքով 1868 թ. գրված մի փաստաթղթի միջոցով. «...մենք շատ ցանկանում ենք մեր քահանայքն մեր միջիցն լինի, պատճառն՝ թեև լուսավորչադավան հայ եմք, բայց խոսակցություններս ուրիշ բառ է, ուտի ազգ եմք մեզ այնպես է հայտնի ոչ մի երկրում ուտի ազգ չկա, բացի մեր Նիժ և Վարդաշեն գյուղերիցն...» (ՀԳԿԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5214, թ. 1):

պանագրերի ուսումնասիրությունը: Այն դեպքում, երբ նիժի մի քանի գերեզմանոցներում կան նույնիսկ մի քանի հարյուր տապանաքարեր, որոնց վրա նշված է հանգուցյալի ուտիաղն, ուտիախոս կամ ուտիաբարբառ. ցեղից լինելը, Սուլթան-Նուխի (նաև մյուս թրքախոս հայ գյուղերի) գերեզմանոցում գոնե մեկ այդպիսի բնութագրում չի հանդիպում:

Մ. Բարխուտարյանցը գրում է, որ գյուղի արևելյան թաղում էր գտնվում շուկան, իսկ արևմտյանում՝ «...նորաշեն և փառավոր եկեղեցին՝ ս. Աստվածածին...»⁹: Վերջինս ցայսօր կանգուն է: Այն եռանավ բազիլիկ, քարաշեն, փայտուծածկ կառույց է: Նման շինություններ անցյալ դարավերջին ու մեր դարաւկղբին շատ վայրերում են կառուցվել և ճարտարապետական առումով առանձին արժեք չեն ներկայացնում (նկ. 1, տախտակ — գծ. Ա): Եկեղեցու որմերին



Նկ. 1. Սուլթան-Նուխիի սր. Աստվածածին եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից:

երկու տեղում պահպանվել են արձանագրություններ: Հարավային մուտքի ճակատակալ սրբատաշ քարի երեսին հինգ տողով փորագրված է շինարարական արձանագրությունը.

Բ(Ա)ՐԻ ՔԱՐՆ ԱՅՍ Խ(Ա)Չ(Ա)Տ(ՈՒ)Ր ԱԹ(Ա)Բ(Ե)Կ—
ԵԱՆՑ, Ի 1873 ԱՄԻ, 10-ին ՍԷԿՏԵՄԲ(Ե)ՐԻ ՇԻՆԷՑ(Ա)Ի
Ս(ՈՒ)ՐԲ ԱՍՏՈՒԱԾ(Ա)ԾԻՆ ԵԿԷՂԷՑԻՍ ԾԱԽՈՒՔ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹ(Ե)ԱՆ, Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՔԱՀԱՆՈ(Ի)Մ է

⁹ Մ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 241:

ԱԿՏԻՍ Ք(Ա)Հ(Ա)Ն(Ա) Տ(Է)Ր ԻՍՐԱԷԼԵ(Ա)ՆՑ¹⁰ ՍՈԼԹԱՆՈՒՄԻ:

Եկեղեցու ներսում, հյուսիսային որմի մեջ ագուցված մկրտարանի սըր-բատաշ միակտուր քարի հարավահայաց երեսին փորագրված է շորս տող.

ՅԻՇԱՏԱԿ Է Ս(ՈՒՐ)Ր ԱԿԱԶԱՆՆ ԷՐ—
 ԷՐԵՑԻ՝ ՈՐԴԻ ԴԱԼՈՒՍՏԻՆ ՆԻ ԻԻՐ ԿՈՂ—
 ԱԿԻՑ ՍԱՆԴՈՒՄՏԻՆ Ն(Ի) ՈՐԴՈՑՆ ՂԱՐԱ—
 ՋԻՆ, ՕՀԱՆԻՆ, ԱՐՐԱՀԱՄԻՆ:

Ինչպես պարզվում է շինարարական արձանագրությունից, եկեղեցին կա-ռուցվել է 1873 թ.: Միաժամանակ արխիվային փաստաթղթերի հետադոստո-թյունը ցույց է տալիս, որ այդ թվականից առաջ գոյություն է ունեցել ավելի հին եկեղեցի: Այսպես, 1839 թ. Սուլթան-Նուխիում հիշվում է սբ. Աստ-վածածին անվամբ եկեղեցի, որը ենթարկվել էր կողոպուտի¹²: Նույն եկեղե-ցին միևնույն առիթով հիշատակվում է նաև 1843 թ. «...աւաղակք գիշերային բացեալ են զղորունսն սբ. Ածածին եկեղեցւոյ Սուլթան-Նուխի գեղջ և մտեալ անդ զողացեալ են զղանաղան եկեղեցական անօթս»¹³: Հայտնի է, որ 1895 թ. վերահիշյալ եկեղեցին ենթարկվել է հիմնավոր նորոգման: Աշխատանքները իրականացվել են համապետականների շրջանում կատարված հանգանակու-թյան շնորհիվ հավաքված գումարի միջոցով. «Մենք, նկատելով մեր եկեղեց-վո խախտված դրությունը, ցանկանում ենք վերանորոգել նրան յուր հիմքի վերա: Սորա համար հմուտ վարպետների ասության համաձայն կծախսվի մո-տավորապէս 800 ռուբլի, որպիսի ծախքը մենք ժողովրդականքն խոստանում ենք հավաքել մեր մեջից»¹⁴:

Արևմտյան թաղում պահպանվել է նաև ընդարձակ գերեզմանոցը, որի մի ծայրում այժմ էլ շարունակվում են թաղումները: Հնավայրից մեր գտած ամն-նահին թվակիր արձանագրությունը վերաբերում է XVII դ. վերջին: Մնացածը XIX-XX դդ. տապանաքեր են և արժեքավոր են պատմության, ազգագրության, բարբառագիտության ուսումնասիրության տեսակետից.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Տ(Է)Ր ԻՍՐԱԷԼԻ
 ԿՈՂԱԿԻՑ ԱՆՆԱԻՆ Է
 ԹՎ(ԻՆ) ՌԲՃԽԴ (1795):

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՊԱԼՈՒՍ¹⁵ ՆՈՒՄԵՑԻ
 ԱՔԱՐԻ ՈՐԴԻ ՄԻՆԱՍԻՆ Թ(ՎԻՆ)
 ՌՄԿԴ (1815), ՄԱՀԻՍԻ Ժ(10):

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԱՐՄՆՈՑ ՏԵՂԻ ՄԵԾ
 ԻՇԽԱՆ ԱԹԱՔԻՇԻ ԻԻԶՐԱՇԻՆ, ՈՐ Է
 ՈՐԴԻ ՊԱՏԱԼԻ, ԲՆԻԿ ՍՈԼԹԱՆ:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՔԱԼԱԽԱՆԵՑԻ¹⁶
 ԽՈՋԱ ԸՍՏԵՓԱՆԻՆ, ԹՈՌՆԸ
 ԱՌԱՔԵԼԻՆ, ՌՄԿԵ (1816):

¹⁰ Տևր-Ավետիս Տեր-Իսրայելյանցին հիշատակում է Մ. Բարխուտարյանցը, որի տանը տեսել էր մի հին «Հայսմավորք» գրված բամբակի թղթի վրա (տե՛ս նույն տեղում):

¹¹ Էրեբր—հավանաբար Հերհեր: Գյուղ Արցախի վարանգա գավառում (այժմ՝ ԼՂԻՄ, Մար-տունու շրջան):

¹² Հովհան, ֆ. 56, ց. 1, գ. 562, թ. 11:

¹³ Նույն տեղում, գ. 1374, թ. 1:

¹⁴ Նույն տեղում, գ. 9130, թ. 3:

¹⁵ Ղապալա կամ Ղարալա—կապաղակն է:

¹⁶ Քուլախան—հայաբնակ գյուղ է Եփրվանում (այժմ՝ Շամախու շրջան, շրջկենտրոնից 8 կմ հարավ):

ԱՅՍ է ՏԱՊԱՆ ՏՈՒՐԱՄԻՇ
ՈՂԼԻ ԱՔԱՐԻ ՈՐԴԻ
ԲՈԼԻ ԻԻԶԲԱՇԻՒՆ,
1846 ԱՄԻ, ՄԱՐՏԻ 1:

Տապանագրերի մեջ առանձնանում է մի արձանագրություն, որ հիշվում են գյուղի քահանայական դասից մի քանի ներկայացուցիչների անուններ.

ԱՅՍ է ՏԱՊԱՆ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԻ, ՈՐ է ՈՐԴԻ Տ(Է)Ր ԻՍՐԱԷԼԻ,
ԹՈՌՆ ԿՈԶԻ ՔԱՀԱՆԱՅԻ, ՆԱԽԱՄԵՍԱՐ ՏԷՐ ԴԱՆԻԷԼ,
ՍՈՔԱ ԵՆ ԱԶԴ ՔԱՀԱՆԱՅԻ, Ի ԲՆԷ ՍՈՒԼԹԱՆ ՆՈՒՆԻ
ՅԱՄՍ ՅՕ ՍԱ ՁԵՌՆԱԴՐԻ, ՎԱԹՍՈՒՆ ԱՄԻ ԱՌ Գ(Յ)ՈՒՂԻ ՏԷՐ ՓՈՒՆԻ,
ՈՐ ՀԱՆԴԻՊԻ ՍՈՅՆ ՏԱՊԱՆԻ ՄԻ ԶԱՆՅ ԱՌՆԷ ՀՈԳԻ(Ո)Յ ԱՍԻ
1846 ԱՄԻ Ի 4 ԱԻՈՒՐՆ ՄԱՅԻՍԻ ՅԱՄՍ է ՎԱԽՃԱՆԻ
ՀԱՆԴԻՊՈՂԱՅԻ ՏԷՐ ՈՂՈՐՄԻ ԱՍԵՄ ՄԱՂԹԵՄ,
ԻՍԿ ՈՐ ԱՌԸՆԹԵՐ ԿԱՆ ՈՒՇԻՄ ՄՏՕՔ ՈՂՈՐՄԻ ԴԱՆ:

ԱՅՍ է ՏԱՊԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՕՆ ԱՍԼԱՆ ԲԷԿԻ
ՈՐԴԻ(Ո)Յ ՂԱՐԱՊԱՂԵ(Ի) ԶՐԱԲԵՐԴԵՅԻ
ԱԹԱԲԷԿԵԱՆՅ ՅԱԿՈՎԲԷԿԻ
ՈՐ ՅԱՍՏԻՃԱՆԻ ԿՕԼԼԵԺՍԿԻՅ ՍԵԿՐԵՏԱՐԻ,

Տ

Ի ԿԶ (66) ԱՄԱՅ ԻԻՐ ՀԱՍԱԿԻ 18—47¹⁷:

30

ԱՍՏ ՀԱՆԳԶԻ ՄԱՐՄԻՆ ՍՈՒ—
ԼԹԱՆ ՆՈՒՆԵՅԻ ՃԱՎԱՅԻՐ
ՊԷՏՐՈՍԵԱՆ, ՈՐ է
ԿՈՂԱԿԻՅ ՄԱՐՔԱՐԱՅ
Ք(Ա)ՀԱՆԱՅԻ ՏԷՐ ՍԱՐԿԻՍԵ—
ԱՆ, Ի ԲԼԵՂԻՅԻ, 1861 ԱՄԻ¹⁸:


Գյուղի արևելյան թաղում պահպանված պատմաճարտարապետական հուշարձաններից նշանավոր է կիսավեր եկեղեցին: Թեև Մ. Բարխուտարյանցը այս եկեղեցու գոյությունը մասին լուծում է, սակայն 1874 թ. մի հիշատակություն¹⁹ համաձայն, այն արդեն կարևոր է, ամենայն հավանականությամբ, կառուցվել էր ավելի վաղ ժամանակներում: Կիսավեր քարաշեն եկեղեցու որմերի պահպանված հատվածներում արձանագրություններ չեն մնացել: Շենքը նախորդի օրինակով եղել է փայտածածկ: Կառույցի գլխավոր առանձնահատկությունը ուղղանկյունաձև լուծված ավագ խորանի առկայությունն է: Ըստ ոճական և կառուցողական, ինչպես նաև հատակագծային ու հորինվածքային առանձնահատկությունների, եկեղեցին կարելի է թվագրել XIX դ. կեսով (տախտակ—գծ. Բ):

Գյուղի նույն թաղամասում, արքայակաղնու մի շրջում Մ. Բարխուտարյանցը ժամանակին տեսել է տապանաքար, որի վրա քանդակված է եղել թուր, նետ ու աղեղ, ձեռնափայտ ու մկրատ: Տապանաքարին կից կանգնեցված


17 Այս տապանագիրը (միակը գերեզմանոցից) հրատարակել է Մ. Բարխուտարյանցը (չորրորդ տողի րացթողումով ու առանձին սխալներով): Երախտաշատ գիտնականը նշում է, որ այս Ասյան-բեկը Զրաբերդի Կուսապատ գյուղի մեկիք Վանու թոռն էր և այդ կողմերում վարել էր դատավորի պաշտոն, որի արդարության հուշակր մահվանից հետո էլ մնացել էր ժողովրդի հիշողության մեջ (Մ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 242—243):

18 Բլեղչեն— մինչև 1918 թ. հայաբնակ գյուղ, ներկայումս գյուղատեղի՝ Կապաղակ գավառում (այժմ՝ Կուտկաշենի շրջան):


19 «Кавказский Календарь на 1885 г.», Тифлис, 1884, с. 216.



Ա



Բ




Գ



ՀՀ համայնաբար արևելյան ծայրում՝ Երեսով դեպի արևմուտք) խաչքարի վրա փորագրված է եղել. «Քրիստոս Աստուած տղորմեա Իոսաամին թվ. Մէ»²⁰:

Սուլթան-Նուխի գյուղի տարածքում պահպանվել են նաև մի քանի կարեւոր հուշարձաններ, այդ թվում Կապաղակ քաղաքատեղին (նկ. 2) և Վանքասարի հուշարձանախումբը: Մատենագրությունից հայտնի է, որ Կապաղակը աղվանից աշխարհի եպիսկոպոսանիստ կենտրոններից էր: Թեմի հեղինակության մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ Աղվանից կաթողիկոսներից երեքը՝ Մատթեոս Ա, Դավիթ Գ, Դավիթ Ե, հայրապետական աթոռ էին կանգնել Կապաղակի եպիսկոպոսությունից: Նշենք, որ Կապաղակ քաղաքատեղիի ու մերձակայքի միակ վանական հուշարձանախումբը, որը կարող էր ծառայել իբրև



Նկ. 2. Կապաղակ քաղաքատեղիի գլխավոր դարպասը:

Եպիսկոպոսանիստ, Վանքասարն է (գտնվում է քաղաքատեղիից շուրջ 5 կմ արևելք, համանուն սարալանջին, թուրքերեն՝ Քիլիսադաղ): Հուշարձանի ճարտարապետական առանձնահատկությունների քննությամբ զբաղվել են մասնագետ-ուսումնասիրողները (Ռ. Մ. Վահրով, Ա. Լ. Յակոբսոն) և տաճարի կա-

²⁰ Տապանաքարի քանդակները ճշտությամբ կրկնված են գավառի ուրիշ գերեզմանոցներում այսպանված տապանաքարերի վրա (Ռուշան, Վանք, Ամուրավան, Գյանդիսան, Ղալակա գյուղերի գերեզմանոցներում): Դրանցում, կարծես, պարտադիր են թրի, նետ ու աղեղի, ձևափայտի կամ ավելի ճիշտ գավազանի խորհրդանշական քանդակները, իսկ մկրատի փոխարեն հաճախ հանդիպում են կշեռքի, մարդու և այլ պատկերներ: Կան նաև արձանագրություններ (XIV—XV դդ. թվագրությամբ): Սուլթան-Նուխու՝ նկարագրված տապանաքարը մենք տեղում չենք գտել, և վիճադիրը, որն արձանագրված է՝ Մէ—758 թ., ստուգելու հնարավորություն չենք ունեցել:

ոուցման ժամանակը համարել V-VII դարերը²¹ (նկ. 3)։ Արդեն վաղ միջնադարում վանքի գոյություն ունենալը ապացուցվում է նաև մատենագրական աղբյուրներով։ Մովսես Կաղանկատվացու պատմության մեջ Կապադակի եպիսկոպոսությունում հիշվում են Մանասե (V դ. վերջ—IV դ. սկիզբ, մասնակցել է Աղվենի ժողովին), Գրիգոր (հիշատակվում է VI դ. երկրորդ կեսի սկզբներին), Հովհաննես (706-707 թթ., մասնակցել է Պարտավի ժողովին), Մատթեոս (եպիսկոպոս էր մինչև 778 թ., որից հետո նշանակվել է Աղվանից կաթողիկոս), Դավիթ Գ (եպիսկոպոս էր մինչև 824 թ., որից հետո նշանակվել է Աղվանից կաթողիկոս), Դավիթ Ե (եպիսկոպոս էր մինչև 958 թ., որից հետո նշանակվել է Աղվանից կաթողիկոս)²²։

Հուշարձանախմբի առնչությամբ նկարագրությունը պատկանում է Մ. Բարխուտարյանցին²³։ «Վանքս շինված է եղել համակ տաշածո և շիշ քարով, այժմ մնում են միայն տաճարիս խաչածև որմերից երկու շարք քարեր և խորանի կողքակ մասն, միաբանից 10 սենյակների և շրջապարսպի հիմքերն»²⁴։ Վանքի շուրջ տարածվում էր գերեզմանոցը, ուր կային բազմաթիվ անարձանագիր ու անտաշ սալանման տապանաքարեր։ Մեկ այլ գերեզմանոց էլ գիտնականը տեսել է հուշարձանախմբից արևելք, սարի վրա, ուր բացի տապանաքարերից եղել են նաև խաչքարեր՝ բոլորն էլ անարձանագիր։

Հաջորդ երկու պատկերը, որոնք ևս ունեն թրքախոս հայ բնակչություն, գտնվում են Սուլթան-Նուխուց հյուսիս-արևմուտք՝ 7 կմ հեռու։ Դրանք իրար խիստ մոտ, գրեթե կից՝ Միրզաբեկու (այժմ՝ Միրզաբեյլի) և Զոռու կամ Զորու գյուղերն են (Կուտկաշենի շրջան)։ Նկատելի է, որ, ինչպես այժմ, հրեանում ևս սրանք Սուլթան-Նուխի գյուղի համեմատ բավականին փոքր գյուղեր են եղել։ Աղբյուրներում այլևիլ հաճախակի հիշատակություններ են պահպանվել Զոռուի վերաբերյալ։ Հայտնի է, որ Զոռուի ներկայացուցիչը մեկն էր Կապադակ գավառի այն հայրենասեր մտավորականներից, որն իր ստորագրությունն էր դրել 1725 թ. Պետրոս Մեծին օգնության ակնկալիքով գրված նամակ-խնդրագրում։ «Նիժ գեղի Բարսեղն և Աստվածատուրն, Զորուի Ալլահ-վերդին, Բումի տեր Մինասսե և պայրամե, Սեյիթ թալու Թորոսն, Մեխլուդավախի Նասիպե, Թոսիկի Վարդանե»²⁵։

Թեև գյուղի վերաբերյալ մատենագրական ավելի հին տեղեկություններ չեն պահպանվել, սակայն, դատելով գերեզմանատանը պահպանված տապանաքարերի հնաոճ արձանագրություններից, այն շին ու մարդաշատ է եղել առնվազն միջնադարից։ Գյուղի բնակչության պայմանները հարևան բնակավայրերի հետ համեմատած ավելի անբարենպաստ էին. «...մեր գյուղը ներկայացնում է կատարյալ ճահիճ, օդը թույնի չափ վտանգավոր է, փոքր ի շատե թուլակազմ և օդին անսովոր մառդկանց համար...»²⁶։ 1890-ական թվականներին սկզբներին Մ. Բարխուտարյանցի այցելության ժամանակ Զոռուն ունեն

²¹ А. Л. Якобсон, Архитектурные связи Кавказской Албании и Армении [«Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊՐԶ), 1976, № 1, էջ 82]։

²² Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 69, 122, 294, 300, 345, 346։

²³ Վանքասարի եկեղեցին պեղվել է 1971 թ., Աղբյուրների ԳԱ պատմության ինստիտուտի կողմից՝ Ռ. Վախդադի ղեկավարությամբ։ Ա. Յակոբսոնը, հենվելով վերջինիս հրատարակած մի հոդվածի վրա [Р. М. Ваидов, К. М. Мамедзаде, Н. М. Гулиев, Новый памятник архитектуры Кавказской Албании («Археологические открытия 1971 года», М., 1972)], խոսում է տաճարի նորահայտության մասին [А. Л. Якобсон, նշվ. հոդվ. (ՊՐԶ, 1976, № 1, էջ 82)]։ Սակայն դա ճիշտ չէ, և չպետք է մոռանալ, որ Ռ. Վախդադի գիտարկումը շուրջ 80 տարի առաջ Մ. Բարխուտարյանցը եղել է հնավայրում և հրատարակել նրա վերաբերյալ համառոտ մի ուսումնասիրություն (տե՛ս Մ. Բարխուտարյանց, նշվ. աշխ.)։

²⁴ Մ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 243։

²⁵ Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, с. 427—428։

²⁶ ԶԳԿՊԱ, ֆ. 56, ց. 1, դ. 8312, ք. 2։



Նկ. 3. Վանքասարի եկեղեցու մնացորդները

45 տուն՝ 345 հայ բնակիչներով²⁷։ 1908 թ. գյուղն ուներ 370 բնակիչ²⁸, իսկ 1914 թ. հունվարի 1-ի մարդահամարի տվյալներով՝ 424 բնակիչ²⁹։ Զոռույուն ավերվել է 1918 թ.։ Նրա բնակչության հիմնական մասը բնաջինջ է եղել։ Միայն քչերին էր հաջողվել փրկվել, որոնք հետագա տարիներին, նպատակահարմար շրջաններում վերաշինել հրո ճարակ դարձած հայրենի գյուղը, տարագրվել են զանազան վայրեր։ Ավելի ուշ Զոռույուն բնակեցվել է ադրբեջանցիներով (գլխավորապես Հայկական ՍՍՀ-ից արտագաղթածներ)։

Գյուղում պահպանվում է սբ. Աստվածածին եկեղեցու կանգուն, սակայն ներսից խիստ ձևափոխված (օգտագործվել է որպես ակումբ, դպրոց, պահեստ և այլն). ներկայումս անօգտագործելի է) շենքը։ Այն եղել է քարաշեն (ավաղված է), փայտածածկ։ Արձանագրություններ շեն պահպանվել։ Թեև կառուցման ժամանակը հայտնի չէ, սակայն նրա մասին պահպանված հիշատակությունների համաձայն այն գոյություն է ունեցել առնվազն 1839 թ.։ Այդ թվականին անհայտ ոճրագործները թալանել և հրդեհել են եկեղեցին. «Ի մեջ սբ. Ածածին եկեղեցվո Ջոռույունի Այրեալ...»³⁰։ Արդեն 1869 թ. եկեղեցին գտնվում էր «քայքայեալ դրութեան» մեջ³¹ և ստիպված վերանորոգման աշխատանքների ծրագրեր էին կազմվում. «...վասն թույլատրելոյ հայազգի ժողովրդականացն Զոռույ գեղջ վերանորոգել պէին եկեղեցի տեղւոյն սեպհական ծախուք իւրեանց, որում ցանկան նոքա ամենայն ջերմեռանդութեամբ»³²։ 1903 թ. մեկ այլ փաստաթղթում խոսվում է Զոռույի նորակառույց եկեղեցու մասին։ Ննթագրելի է, որ սբ. Աստվածածին եկեղեցին մի վերջին անգամ նորոգման էր ենթարկվել զարասկզբին. «Եւ քանզի՝ նորաշեն եկեղեցին այն կանգնեալ կա օժանդակութեամբ ազգայնոց և ցայսօր չէ ևս է ավարտեալ և զուրկ է միանգամայն ի ներքին բարեզարդութենէ...»³³։

Գյուղի գերեզմանոցում, որի տարածքի մի զգալի մասն արդեն յուրացվել է, պահպանվել են բազմաթիվ անարձանագիր անտաշ սալանման տապանաքարեր։ Արձանագրված չորս տապանաքար գտանք միայն.

ԱՅՍ է ՏԱՊԱՆ ՂԱԲԱԼՈՒ ԶՈՐԼՈՒ—
ՎԷՑԻ Տ(Է)Ր ԱՐԱՀԱՄԻՆ,
ԹՎ(ԻՆ) ՌՄԿԴ (1815)։

ԱՅՍ է ՏԱՊԱՆ ՄԱՐՏՐՈՍԻ
ԿՈՂԱԿԻՑ ՍՈՒՐՄԱՅԻՆ,
ԹՎ(ԻՆ) ՌՄԿԶ (1817)։

ԱՅՍ է ՏԱՊԱՆ ՄԵԼՔՈՒՄԻՆ, ՈՐ է
ՈՐԴԻ ՇԱՀՍՈՒՎԱՐԻ, ՕՎ ՈՔ
ԿԱՐԴԱ Ա(ՍՏՈՒԱ)Մ ՈՂՈՐՄԻ ԱՍԵՔ,
Թ(ՎԻՆ) ՌՅԶ (1857)։

ՏԱՊԱՆՍ է ԱԼԼԱՀՎԵՐԱՆԻ ՈՐԴԻ
ԷՐ ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄ ՕՍՄԱՆԵԱՆՑԻ
ՄԱՅՐ ԷՐ ՆՈՒՐԱՐԸ, ԿԻՆՆ ԷՐ ԶԱՌՆ—
ՇԱՆ, ՈՐԴԻՔ ՍՈՐԱ ԳՐԻԳՈՐ ՈՒ
...ԳԻԻԿԵԱԶԱՐ։

27 Մ. Բարխուտարյանց, Եջ. աշխ., էջ 244։

28 «Кавказский Календарь на 1910 г.», Тифлис, 1909, с. 244.

29 «Кавказский Календарь на 1915 г.», Тифлис, 1914, с. 120.

30 Հոգեպ., ք. 56, ց. 1, գ. 562, թ. 12.

31 Նույն տեղում, գ. 5377, թ. 1։

32 Նույն տեղում։

33 Նույն տեղում, գ. 10042, թ. 1։

Ջողուժի հարավային կողմում տարածվում է Միրզաբեկլու գյուղը։ Այն մոտավորապես 1890 թ. ունեն 35 տուն՝ 300 թրքախոս հայ բնակիչ³⁴։ 1895 թ. ունի 40 տուն³⁵, իսկ 1908 թ.՝ 412 բնակիչ³⁶։ 1914 թ. գյուղի բնակչությունը կաղմում էր 361 մարդ³⁷։ Թեև թրքախոս, սակայն իբրև քրիստոնյա բնակչություն, միրզաբեկլուցիները ևս զերծ չեն մնացել 1918 թ. կոտորածներից։ Բալերախտարար այստեղ, ի տարբերություն հարևան Ջողուժի, հայ բնակիչները կարողացել են ժամանակին ապահով թաքնվել մոտակա անտառներում և մեծագույն մասով աղատվել բնաջնջումից։ Խորհրդային կարգերի հաստատումից հետո Միրզաբեկլուն շարունակեց մնալ գավառի թրքախոս հայերով բնակեցված գլխավոր գյուղերից մեկը։ Ավելի ուշ գյուղին կից մի նոր թաղամասում հաստատվեցին նաև Հայկական ՍՍՀ-ից արտագաղթած ադրբեջանցիներ։ 1981 թ. գյուղի բնակչության թիվը կազմում էր 628 մարդ³⁸ (այդ թվում՝ ադրբեջանցիներ, լեզգիներ)։ 1985 թ. Միրզաբեկլու գյուղի բնակչության միայն մի փոքր մասն էին կազմում (շուրջ 30 տուն) թրքախոս հայերը։

Գյուղի ուշ շրջանի պատմության ուսումնասիրության համար կարևոր աղբյուր են պահպանված արխիվային փաստաթղթերը։ Դրանցում իրենց առատությամբ առանձնապես աչքի են ընկնում համագյուղացիների կողմից սեփական կրոնի ու մայրենի լեզվի պահպանման համար ծավալած գործունեությունը վերաբերող տեղեկությունները։ Դա, ինչ խոսք, պատահական չէ, քանի որ ազգապահպանման խնդրի հետ առնչվող հարցերն առավել խստությամբ ու լրջորեն էին ծառացած արդեն թրքախոս դարձած հայերի համար։ Ահա թե ինչ էին դրում միրզաբեկլուցիները իրենց համագյուղացի Համբարձում Ավետիքյան Տեր-Ավագյանցին՝ գյուղի քահանա ձեռնադրելու կապակցությամբ. «...իբրև անսուտ ճշմարտություն վերստին խոստովանվում ենք, որ մեր թրքախոս ժողովուրդս նեղսակրոնյանները քահանայի կողմանե և մեր գավակների մայրենի լեզվից կարոտ հոգսերը մեծ են և արժանի ուշադրության, վասնզի ներկա ժամանակների պահանջների համեմատ, հագիվ թե կարողանամք մի այնպիսի արժանավոր քահանայացու ձեռք բերել, որպիսին է հիշյալ տիրացու Համբարձում Ավետիքյան Տեր-Ավագյանցը, որը եղել է երբեմն ուսուցիչ հայոց լեզվի և ի մանկութենե պարապել եկեղեցում...»³⁹։ Ուշագրավ է նաև առաջարկված քահանայի ձեռնադրության մերժման մասին էջմիածնի սինոդից պատասխան ստանալու առթիվ (նկատի էր առնվել քահանայի թերուս լինելը) Միրզաբեկլու գյուղի հայ հասարակությունից երկրորդ խնդրագիր-բացատրագրի բովանդակությունը. «Քաջ իսկ հայտնի պետք է լինի ձերդ արժանապատվության, որ մենք վաղուց հետ է սեփական քահանա շունենալու պատճառով կառավարվում ենք հեռավոր գյուղերից երթևիկ քահանաներով... նախ. շատ-շատ անգամ է պատահում, որ ժամասացություն չենք լսում, նորածինները շաքաթներով մնում են անկնոնք, հիվանդներն առանց հաղորդության, վախճանվածներն երկար ժամանակ անթաղ, երկրորդ. մեր նախնիքը, երկար դարեր գտնվելով մահմեդականաց բռնակալ լծի տակ, կորցրել են իրենց մայրենի լեզուն և շատ ազգային սովորություններ, այնպես որ մեր գյուղի ամբողջ հասարակությունը մինչև այժմ էլ խոսում է թուրքերեն բարբառով, ազգայինը թողած՝ հետևում թրքական վարք ու բարքի և թեպետ ազգային կրոնն ու գուխավոր ծեսերը մինչև այսօր պահպանել է, բայց՝ ցավոք սրտի պետք է ասենք, որ եթե այսուհետև էլ չլինի մի արժանավոր հովիվ՝ սեփական քահանա, աչն ժամանակ այդ անացած բաներն էլ կկորչին և մենք կորած կլինենք հոգով և մարմնով։ Երրորդ՝ ամենայն մի հասարակ գյուղ էլ աշխատում է չուր մանուկներին ուսմունք տալ, մայրենի լեզու սովորեցնել, բայց մեռ լճակները աչքները

34 Մ. Թարխտարյանց, նշվ. աշխ., էջ 244։

35 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9110, թ. 7։

36 «Кавказский Календарь на 1910 г.», с. 321.

37 «Кавказский Календарь на 1915 г.», с. 158.

38 «Азербайжан Совет Энциклопедиясы», тилд 7, Баку. 1982, у. 591.

39 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9110, թ. 2։

բաց են անում թե չէ, թուրքերեն են լատմ, թուրքերեն են խոսում. մյուս գյուղերը հեռու են և մի լավ քահանա չունենք, որ մեծերի հետ փոքրերին էլ կրթն, լեզու սովորեցնեն, իսկ եկավոր քահանայք հաղիվ հազ կարողանում են լրացուցանել միայն մեր հոգևոր կարիքները:

Այս բոլորը տեսնելով, մենք այլևս չենք կարող համբերել այլ կամենում ևնք ունենալ սեփական քահանա, որ մեր սրտի փափագները կատարեն և մենք էլ պարզ երես լինենք մեր արյունակից եղբայրների և այլազգիների մոտ...»⁴⁰, Թերեա դիպուկ ու բնորոշ օրինակներից է Թիֆլիսում, մի դեպքի առնչությամբ տեղի ունեցած զրույցը, որն արձանագրել էր տեղում ականատես թրքախոս հայ՝ Ղազար քահանա ջոդուեցին իր գրքում. «...Մենք, մի բուռն թրքախոս հայերես, թեև անօրեն լեռնականներին և արյունարբու մահմեդականներին զոհ տվինք մեր թանկագին մայրենի լեզուն, մեր կյանքն ու հարստությունը, բայց մեր կրոնքն ու հավատը, մեր ազգությունն ու մեր ս. եկեղեցին արյան գնով անխախտ ու հաստատ պահեցինք: Իսկ դուք, վախկոտ և միամիտ թիֆլիսեցիներդ՝ մեղ արհամարհելով ու ծաղրելով, մեզ թուրք եք անվանում, հա՛...»⁴¹: Այս կարգի տեղեկություններն առատ են, սակայն բերված օրինակներն իսկ բազմաթիվ միշտ էլ զգացել են ու խորապես գնահատել կորցրած մայրենի լեզվի արժեքն ու կարևորությունը: Հետաքրքրական է, որ, թեև XVIII դ. առաջին կեսին վերոհիշյալ երեք գյուղերի հայ բնակչությունը դարձավ թրքախոս և հայերենը նրանց մեծ մասի համար որպես մայրենի լեզու գրեթե չվերականգնվեց, այնուամենայնիվ մինչև Ադրբեջանում սովետական կարգերի հաստատումը իբրև գրավոր լեզու մնաց հայերենը: Դրա վառ ապացույցն են գերեմամյանցիներում պահպանված տապանադրերը և բազմաթիվ համախոսական նամակները:

Միրզաբեկու գյուղի սբ. Աստվածածին եկեղեցին (նկ. 4) պահպանվել է կանգուն վիճակով (այժմ օգտագործվում է որպես մթերապահեստ): Այն ամբողջապես կառուցված է աղյուսով, կրաշաղախ է: Փայտածածկ է: Ունի երկու մուտք՝ արևմուտքից և հարավից: Արևմտյան ճակտոնի ծայրում պահպանվում է քառասյուն, սրածայր վեղարով ավարտվող վանդակատունը: Արձանագրություններ չեն պահպանվել: Եկեղեցու կառուցման կամ վերանորոգությունների վերաբերյալ տեղեկություններ չկան նաև արխիվային փաստաթղթերում: Ըստ հորինվածքային, կառուցողական, հատակագծային ու գեղարվեստական առանձնահատկությունների այն կարելի է թվագրել XIX դարով (տախտակ—գծ. 9):

Գյուղի տարածքում պահպանված պատմական հուշարձաններից ուշադրության է արժանի խիտ անտառով ծածկված խիստ ընդարձակ հին գերեզմանոցը: Այստեղ ավելի քան երկու հարյուր անմշակ սալատապանների մեջ միայն մի քանի տապանաքար էին սրբատաշ, մշակված՝ ուղղանկյունաձև: Վերջիններից հինգի վրա գտանք արձանագրություններ.

Ի ՅԱՅՍՄ ՏԱՊԱՆՍ ԱՆՓՈՓ—

ԵԱԼ Է ՄԻՐՉԱՔԱԿԼՈՒԵՑԻ ԽԱ—

ԶԻ ՅԱԿՈՐԵԱՆ ՍԱՐԳԻՍ—

ԵԱՆՑ, ՈՎ ՈՔ ՀԱՆԳԻՊԻ

ԱՍԷ ԱՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ, 1869 ԱՄԻ,

ԱՍՏ ՀԱՆԳԶԻ ՄԱՐՄԻ—

ՆԸՆ ՄԻՐՉԱՔԱԿԼՈՒԵՑ—

ՑԻ ՅՕՎՍԷՓ ՄԱՐԿՈՍ—

ԵԱՆ ՍԱՐԳԻՍԵԱՆՑ, 1870:

⁴⁰ Նույն տեղում, թ. 7:

⁴¹ Ղազար քահանա Հովսեփյան, Անարկներ ուտիացի և մահմեդական հայերի մասին, Թիֆլիս, 1904, էջ 31:

Ի ՇԻՐՄԻՍ ԵԴԵԱԼ ՄԱՐՄԻՆ ՍԱՀԱԿԱՅ,
ՍԱԳԻՆԵԱՆՅ՝ ՏՈՀՄԵՆ, ՈՐԴԻՈՅ ՅԱԿՈՎՐԱՅ¹²
ՅԱՅՅԷ ՅԱՆՅՈՂԱՅ Ի ԽՈՐՈՅ ԿԱՐԴԱՅ
ՓՈԽԵԱԼ ՀՈԳԻՈՅՆ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԵԱ,
1897 ԱՄԻ, 15 ՄԱՐՏԻ, Ի ԳԻՒՂՆ ՄԻՐՋԱՐԷԿԼՈՒ,

ԱՍՏ ՏՆԻ ՄԱՐՄԻՆ ԲԱԼԱՍԱՆ
ՏՈՒՍՏՐ ՏԷՐ ԴԱՆԻԷԼ
ԱԶԳԱԻ ՏԷՐ ԱԻԱԳԵԱՆՅ, 1899 Թ.՝ .

Ի ՍՄԻՆ ՏԱՊԱՆԻ ԱՄՓՈՓԵԱԼ ԴՆԻ
ՄԱՐՄԻՆ ՎԱՐԴԱՆԻ ՈՐԴԻ ՄԻՆԱՍԵԱՆԻ,
ԱԶԳԱԻ ՊԵՏԻԵԱՆՅԻ, ՎԱԽՃԱՆԵՅԱԻ
1909 ԱՄԻ, 28-ԻՆ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ:



Նկ. 4. Միրզաբեկլուի սբ. Աստվածածին եկեղեցու տեսքը հառա՛վ-արևմուտքից:

Հետաքրքրական է նաև «Սարի-փիր-դեղին սուրբ տա՛ված տեղը, որ գտնը-վում է Միրզաբեկլու թրքախոս հայադավան գյուղի հա՛րավային կողմը մի խիտ

¹² Մահակ Սագինյանը գյուղական դատավոր էր, բարեգործ և հարուստ անձնավորություն: Երա մասին հիշատակություն ունի շուղուեցի Ղազար քահանան. «Մի անգամ (1880-ական թվա-կաններին) Միրզաբեկլու թրքախոս Հայադավան գյուղացի հայտնի հարուստ և բարեգործ գյու-ղական դատավոր (սուդիա) Մահակ Սագինյանը (տողերիս գրողի հարազատ մոր քեռին) մի քանի ուրիշ պատվավոր գյուղացիների հետ՝ ԼկԼԼ և իջևանել էին ինձ մոտ հյուր» (Ղազար քահանա Հովսեփյան, Նշվ. աշխ., էջ 29):

անտառի մեջ, ուր կան երկու տապանաքարեր՝ արաբական լեզվի արձանագրությամբ»⁴³,

Ամփոփելով ասեմք, որ Կապաղակ գավառում ու շրջակայքում ցայսօր գոյություն ունեն թրքախոս հայերի շատ գյուղատեղիներ, պատմաճարտարապետական հուշարձաններ (բնակավայրերը գլխավորապես հայաթափ են եղել 1918 թ.): Բավական է միայն հիշել, որ XVIII դ. սկզբներին թուրքերը և մահմեդական լեռնցի ցեղերը «...Ղափալա (Կապաղակի— Ս. Կ.) և (37) գեղ շափմիշ արարին, դարասովի գեղերանքն թուրքացրին. Շաքուայ երկրի գեղերանքն ես թուրքացրին...»⁴⁴, և որոնց հայ բնակիչները սկզբնական շրջանում դժգոհում էին, թե. «...ցերեկն թրքություն ենք անում, գիշերն հայություն...»⁴⁵, Այժմ, այդ դեպքերից շուրջ 260 տարի անց, նրանք շարունակում են իրենց հայ կոչել (շատերը հայերեն մի խոսք անգամ չիմանալով հանդերձ): Մտալերենք թրքախոս հայ, չոռուների Ղազար քահանայի՝ իր հայրենակիցներին ու հարևան մահմեդական հայերին ուղղված հետևյալ խոսքերը. «...եթե մենք՝ հայերս, ձեռնհաս թեմական առաջնորդներ, շրջիկ քարոզիչ վարդապետներ՝ բանիմաց քահանաներ, ունենայինք, այդ դժբախտ թրքացած բազմաթիվ հայերը կրկին հայ քրիստոնյա դարձած կլինեին»⁴⁶,

Ներկայումս երեք գյուղերում էլ գործում է ադրբեջանական մեկական դպրոց: Կարծում ենք, որ իրենց ազգությամբ հայ ճանաչող այս գյուղերի բնակիչների համար խիստ անհրաժեշտություն է վերաբացել ազգային դպրոց:

ԲՀԴ:

АРМЯНСКИЕ СЕЛА ГАВАРА КАПАГАК ИСТОРИЧЕСКОЙ АРМЕНИИ, ГОВОРЯЩИЕ НА ТУРЕЦКОМ ЯЗЫКЕ САМВЕЛ КАРАПЕТЯН

Резюме

В окраинных провинциях исторической Армении и в соседних с ними областях до сих пор есть некоторые села, армянское население которых в результате вековых тяжелых политических условий утратило родной язык, но сохранило христианскую веру и национальные традиции. К этим селам относятся Султан-Нухи и Мирзабеклу (ныне Азерб. ССР, Куткашенский район), которые богаты также историческими памятниками.

Важным источником для изучения этнографии и истории населения этих сел являются сохранившиеся на их кладбищах надгробные камни, из числа которых датированные относятся к XVIII—XIX вв.

⁴³ Ղազար քահանա Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 54:

⁴⁴ Դ. Ա. Զով, նշվ. աշխ., էջ 416:

⁴⁵ Մ. Բարխուտարյան, Պատմություն Աղվանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 85:

⁴⁶ Ղազար քահանա Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 47: